Զահրատ

Բառեր բառեր

Բառեր բառեր իմ զինուորներս դուք էք
Ես ձեզ մէկ մէկ կ’ողջագուրեմ ու զօրագունդ զօրագունդ
Իմ ձեռքովս կը շարեմ
Ու երբ տեսնեմ թէ ամէն ինչ կարգին է
Թէ ոչ մէկ զօրք ոչ մէկ զինուոր սխալ ոտքով
չի քալեր

Ես ձեզ ճակատ կը ղրկեմ
Արիասիրտ իմ զինուորներս էք դուք
Իմ անունովս դուք կ’իջնէք մահասփիւռ դաշտը ռազմի
Բանաստեղծի դրօշս սէգ
Լուսածածան կ’ալեծփի ձեր ձեռքերուն մէջ հզօր
Կը մարտնչիք ամրոց ու բերդ կը նուաճէք յաղթապանծ

Բառեր բառեր իմ զինուորներս խիզախ
Ես բառերու խենթ ռազմավար առանց ձեզի չկամ ես